Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 03/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ծառայողական մասնաշենքի դիմացի մուտքի ավտոճանապարհի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի Հայտերի բացման

ք. Երևան 26 հուլիսի 2017թ. ժ. 14:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Գևորգյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Նազինյանը

Ա. Մելիքսեթյանը

Պ. Բոշնաղյանը

Լ. Օհանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Գնումների պլանով նախատեսված գինը 5 205 000 ՀՀ դրամ

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 03/17 ծածկագրով ներկայացված հայտերի մասին:

2. Հրավերով ներկայացված մասնակիցների գրաված տեղերի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀԾԳՑ թ1 էներգաբլոկի ծառայողական մասնաշենքի դիմացի մուտքի ավտոճանապարհի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 02/17 ծածկագրով ներկայացված հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երեք կազմակերպություն՝

1. «Մավշին» ՍՊԸ
2. «Բերմա» ՓԲԸ
3. «Վահրադյան Շին» ՍՊԸ

1.2. «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.3. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Մավշին» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 4 910 000 (չորս միլիոն ինը հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

1.4. «Բերմա» ՓԲԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.5. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Բերմա» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 4 932 000 (չորս միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

1.6. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.7. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 4 999 200 (չորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտի և մասնակցի զբաղեցրած տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

- 2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Մավշին» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Բերմա» ՓԲԸ-ին, երրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

2.3. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հանձնաժողովի որոշման մասին, պահանջելով ներկայացնելու հրավերով

նախատեսված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող նյութերը:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ծառայողական մասնաշենքի դիմացի մուտքի ավտոճանապարհի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման պատասխան եզրակացությունը ստանալուց հետո այն տրամադրել գնահատող հանձնաժողովի անդամներին:

1.2. Հանձնաժողովի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կող 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ — Գևորգյան

Անդամներ՝ — Ռ. Նազինյան

Ա. Մելիքսեթյան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ — Ա. Պետրոսյան